ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի.

ք. Գավառ 5 օգոստոսի 2026թ.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը եվ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 13-րդ կետի համաձայն սույն թվականի օգոստոսի 5-ին ժամը 12:00-ին՝ հետադարձ աճուրդի ներկայացման վերջնաժամկետին, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում տեղի ունեցավ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով (eauction.armeps.am կայք) համակարգի միջոցով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Լ. Գ. Սիրունյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Գ. Ն. Աբրահամյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Ս. Բ. Ղարաբաղցյան

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի ՀՎՀՀ-ն	Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն	Մասնակցի հեռախոսահամարը
1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	02662703	maxoil.llc@mail.ru	094-52-67-51

Հանձնաժողովը գնահատեց.

1) «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1, ըստ որի գնային առաջարկ է ներկայացվել 1-ին և 2-րդ չափաբաժինների համար,
- առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր,
- իրական շահառուների մասին հայտարարագիր՝ հավելված 1.3:

Գնման առարկայի նախահաշվային գինը՝

Բենզին պրեմիում, կտրոններով	Դիզելային վառելիք, կտրոններով
672.000 /վեց հարյուր յոթանասուներկու հազար դրամ/	1.357.000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար դրամ/

Էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում մասնակցի կողմից նախօրոք ներկայացված գնային առաջարկները չեն նվազեցվել են և աճուրդն ամփոփելու պահին մասնակցի ներկայացրած գնային առաջարկները, առանց ԱԱՀ-ի, կազմել են՝

ՀՀ դրամ

Չափաբա-ժինը	Գնման առարկայի անվանումը	«Մաքս Օիլ» ՍՊԸ	Գինը ԱԱՀ-ով
1	Բենզին պրեմիում, կտրոններով	560,000	672.000
2	Դիզելային վառելիք, կտրոններով	1.169.166,67	1.403.000

2) Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածների պահանջներով՝ հանձնաժողովը **որոշեց՝**

- 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին:
- 2-րդ չափաբաժնով մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում՝ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հիմքով:
- Ընտրված մասնակից «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին համակարգի միջոցով առաջարկել հրավերով սահմանված ժամկետներում հաստատել կնքվելիք պայմանագրի նախագիծը, ինչպես նաև ներկայացնել որակավորման ու պայամանագրի ապահովումները:
- Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:

Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել մասնակցի կողմից որակավորման ու պայամանագրի ապահովումները ներկայացնելու օրվա հաջորդող հետո չորրորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ		Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Լ. Գ. Սիրունյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Գ. Ն. Աբրահամյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար		Ս. Բ. Ղարաբաղցյան